



## Enheten för flerspråkighet, EFF

- Ուղղված է ինչպես պետական այնպես էլ անկախ գործունեությանը:
- Մայրենի լեզվի ուսուցանում տարրական և հատուկ տարրական, ավագ և հատուկ ավագ դպրոցում:
- Մայրենի լեզվով օգնություն նախադպրոցական հաստատություններում
- Ուսումնական ուղեցույց մայրենի լեզվով:
- Ներածական աջակցություն մայրենի լեզվով:
- Հարցում, առաջադրանքներ մայրենի լեզվով:
- Զննություն մայրենի լեզվի առարկայից:

**Enheten för flerspråkighet**

[flersprakighet@uppsala.se](mailto:flersprakighet@uppsala.se)

018-727 20 26



## Մայրենի լեզվի դասավանդում

 <p><b>Grundskola &amp; grundsärskola</b> Modersmål är ett ämne som kan läsas hela grundskoletiden.</p>	 <p><b>Gymnasieskola &amp; gymnasiesärskola</b> Modersmål kan läsas i form av modersmålskurser.</p>
 <p><b>Nationella minoritetsspråk</b> Nationella minoritetsspråk som modersmål i Uppsala kommun</p>	 <p><b>Förskola</b> Riktat stöd till förskolebarn som kan ansökas av förskolans pedagoger.</p>

[flersprakighet.uppsala.se](http://flersprakighet.uppsala.se)



## Ո՞վ կարող է անցնել մայրենի լեզու առարկան

( Զի վերաբերվում ազգային փոքրամասնության լեզուներին )

Այն աշակերտը, որի ծնողները կամ ինամակալը ունի այլ մայրենի լեզու, կառաջարկվի մայրենի լեզվի ուսուցում , եթե.

1. Այդ լեզուն աշակերտի ամենօրյա հաղորդակցման լեզուն է տանը:
2. Աշակերտն ունի լեզվի տարրական գիտելիքներ:

Աշակերտը պետք է խոսի և հասկանա լեզուն: Ուսուցումը ընթանում է մայրենի լեզվով և իրականացվում է ազգային ուսումնական պլանով:

### Ազգային փոքրամասնությունների լեզուներ

Շվեդիան ունի հետևյալ փոքրամասնությունների լեզուներ. Ֆիններեն, սամյան լեզուներ, գնչուական լեզու և իդիշ: Ազգային փոքրամասնությունների լեզուն ուսուցանելու համար, աշակերտը պետք է պատկանի փոքրամասնության խմբին: Պարտադիր չէ, որ աշակերտը խոսի տանը այդ լեզվով կամ ունենա լեզվի տարրական գիտելիքներ: Հայտում կա երկու ուսումնական պլան՝ աշակերտը պետք է սովորի որպես մայրենի, թե որպես սկսնակ:

Enheten för flerspråkighet (EFF) samordnar modersmålsundervisningen i Uppsala.

### Տարրական գիտելիքներ

Բոլոր լեզուների համար պահանջվում է տարրական գիտելիքներ, բացառությամբ փոքրամասնության լեզուների: Երբ սկսվում է դասավանդումը, ուսուցիչը ստուգում է աշակերտի լեզվի իմացության մակարդակը: Գնահատվում են ինչպես լսողական ըմբռնումը, այնպես էլ բանավոր կարողությունները: Տեղեկատվություն այն մասին, թե որն է տարրական գիտելիքը դուք կգտնեքն EFF- ի կայքում:

### Ինչպես դիմել

Հայտը կարող է ներկայացնել ծնողը կամ ինամակալը: Ձևը հասանելի է դպրոցում կամ EFF – ի կայքում: Լրացրեք ձևաթուղթը, ստորագրեք և ներկայացրեք աշակերտի դպրոց: Տնօրենը պետք է հաստատի դիմումը, այնուհետև դպրոցը պետք է ուղարկի այն EFF ոչ ուշ, քան հունիսի 15- ը գալիք ուսումնական տարվա համար: Հունիսի 15 – ից հետո ասացված հայտերի տեղը չի կարող երաշխավորվել:

## Այսպես է կազմակերպվում դասավանդումը

Ուփսալայում մայրենի լեզվի ուսուցումն իրականացվում է ուսուցման երաշխավորված ժամից դուրս: Այսպիսով, մայրենի լեզվի դասերը տեղի են ունենում հիմնական դասերից դուրս, հաճախ դպրոցական օրվա ավարտից հետո: F-5 դասարանի աշակերտների մայրենի լեզվի դասերը տեղի են ունենում իրենց դպրոցներում: Իսկ 6-9 դասարանի աշակերտները համատեղ խմբերով հավաքվում են նշանակված դպրոցում ուշ կեսօրին կամ երեկոյան: Աշակերտն ինքն է գնում տվյալ դպրոց: Եթե աշակերտը չունի ավտոբուսի տոմս, ապա մայրենի լեզվի ուսուցիչը բաժանում է:

## Լրացուցիչ տեղեկություններ

EFF- ի կայքում դուք կգտնեք լրացուցիչ տեղեկություններ Ուփսալայում մայրենի լեզվի ուսուցման մասին:

[flersprakighet.uppsala.se](https://flersprakighet.uppsala.se)

